ԱՌԱՋԻՆ
ՕՐԸ
ԳՅՈՒՂՈՒՄ
ՌՈՒԶԱՆ ՄԻՐԶՈՅԱՆ

Ռուզան Միրզոյան - Վարդանյան

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Երևան 2023 թ.

Խմբագիր՝ **Սուսան Վարդանյան**

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

«Առաջին օրը գյուղում» երգիծական ժանրով գրված վիպակը հեղինակի երկրորդ գիրքն է՝ «Խառնաշփոթ գույներ» ժողովածուից հետո: Գիրքն, անշուշտ, կհրապուրի ինչպես տասնչորս և ավելի տարիքի պատանիներին, այնպես էլ մեծահասակ ընթերցողներին:

Գլխավոր հերոսուհու պարզ ու անմիջական պատկերացումները հայրենի բնության, դեպքերի, իրերի, կենդանիների և գյուղում բնակվող մարդկանց վերաբերյալ, ինչպես նաև սիրո և գեղեցիկի ընկալումը կհիացնեն ընթերցողներին, իսկ բազմաթիվ ծիծաղելի դրվագները, որոնց մեջ հայտնվում է գրքի հերոսուհին առաջին անգամ գյուղում լինելու պատճառով՝ կբարձրացնեն բոլորի տրամադրությունը և ժպիտներ կպարգևեն:

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ժամանակի մեքենան 5
Տախտակե տնակը 12
Գոմում 17
Առավոտը գյուղում 21
Կովը 24
Գետափին 29
Անծանոթ բուրմունք 37
Կարմիր շրջազգեստը 42
Հարսնացուն 48
Հրաժեշտ 53



ՄԱՍ 1

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՔԵՆԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԵՔԵՆԱՆ

Ամառային արձակուրդներն են: Վերջապես վաղ առավոտյան չեմ արթնանում զարթուցիչի զանգից, ոչ էլ տատիկիս վերմակ քաշքշելուց: Արդեն մի քանի օր է հանգիստ քնում եմ մինչև աշխարհի զարթուցիչը՝ արեգակը, ծակելով բացում է աչքերս, բայց ա՛յ քեզ փորձանք, լույսը դեռ չբացված՝ զարթուցիչների փոխարեն հնչում է հեռախոսիս զանգն այնքան երկար, որ ստիպված վերցնում եմ:

- Հե՛յ, Մառա՛, հեռախոսի միջից գոռում է համակուրսեցիս՝ Գայան, ուրախ լուր ունեմ, մեր կուրսի Կարենը բոլորիս հրավիրել է մի քանի օրով իրենց գյուղ՝ հանգստանալու: Արդեն տասնութ ուսանողներ ցուցակագրվել են, ավելացնե՞մ քո անունը:

- Ի՞նչ,- երջանկությունից վեր եմ թռչում անկողնուցս,- ե՞րբ ենք գնում:

- Հենց վաղը: Նա ասաց, որ գյուղում շատ բարեկամներ ունի և մենք կգիշերենք իրենց հյուրընկալ տներում:

- Գա՛յ ջան, դու աշխարհի ամենալավ Գայան ես,- ես երբեք գյուղում չեմ եղել, միշտ երազել եմ ինչ-որ

մի հրաշքով հայտնվել որևէ թեկուզ շատ փոքրիկ գյուղակում:

- Շատ մի՛ ուրախացիր, դա աշխարհից կտրված հեռավոր գյուղ է, որտեղ նույնիսկ ինտերնետային կապ չկա: Հրաշքը լավ ասացիր՝ մեքենան, որը մեզ կտանի, իրական «ժամանակի մեքենա» է: Այն մեզ կհասցնի մեր ժամանակից դեպի անցյալ՝ մի երեսուն կամ քառասուն տարի դեպի հետ:

Հեռախոսը դնելուց հետո վեր եմ կենում ու արագ պատրաստում ճամպրուկս: Վերջապես կծանոթանամ գյուղում ապրող պարզ ու հասարակ մարդկանց, նրանց կենցաղին, կզմայլվեմ հայրենի բնության հրաշքներով:

Սպասվելիք «վաղը» կարծես մի քանի տարի է տևում: Վերջապես ճանապարհ ենք ընկնում: Ավտոբուսը մի քանի ժամից մեզ հասցնում է գյուղի ամենամոտ ավտոկայան, որտեղ մեզ արդեն սպասում է «ժամանակի մեքենան»: Դա մի ջարդուխուրդ կողերով հին բեռնատար է, որի հիմնական բեռը մենք ենք: Հպարտորեն մերժելով օգնության մեկնած բոլոր ձեռքերը, շատ մեծ դժվարությամբ բարձրանում եմ ու բոլորի պես կանգնում մի քանի կարտոֆիլի պարկերի կողքին: Մի պահ ինձ զգում եմ այդ գորշ պարկերից մեկն ու անմիջապես կարողանում եմ գնահատել իմ

առավելությունը՝ ես ձեռքեր ունեմ: Շատ ամուր բռնվում եմ բեռնատարի կողերից ու զարմանում՝ համակուրսեցիներս ինչպե՞ս են կարողանում այս անսանձ ձիու նման ցատկոտող մեքենայի մեջ հումոր անել ու հռհռալ:

- Վարպե՛տ, կամաց քշի, հո կարտոլ չե՞ս տանում,- ծիծաղելով գոռում է Արամը:

Նրա շատ բարձրահասակ, ամուր ու թիկնեղ արտաքինին նայելով ես հայոց լեռների ուժն եմ զգում և նրա կողքին կարծես շատ պաշտպանված եմ: Մտովի գումարում եմ նրա այս մեկ ժամվա բարի ժպիտների մոտավոր քանակը, մարդուն օգնելու պատրաստակամությունը, կատարած բոլոր բարի գործերը և այդ գումարից ստացված թիվը բաժանում եմ նրա ամբողջ ծանրության վրա: Այդ թիվը համեմատում եմ սովորական մարդու մեկ կիլոգրամին հասնող բարության հետ, և պարզվում է նաև՝ նա խմբի մեջ ամենաբարին է:

- Կարտոլ է տանում, բա ինչ ես կարծում, միայն մեզ համար չէ, որ քաղաք է եկել: Ինչ-որ չի վաճառվել այստեղ է, բայց մինչև տեղ հասնենք Գայան բոլորը կուտի, կվերջացնի,- ծիծաղելով շարունակում է Հրանտը: Նա առիթը բաց չի թողնում ընդգծելու Գայայի անբնական չաղությունն ու դանդաղկոտ շարժումները:

- Իրոք, դա կվերջանա,- լսվում է Գայայի զայրացած ձայնը, որովհետև դրանք բոլորն իմ ձեռքով վայրէջք են կատարելու քո դանդալոշ գլխին:

Ես լսում եմ նրանց ու զարմանում: Այնքան հանգիստ ու երջանիկ տեսք ունեն, մի՞թե չեն նկատում, որ այս «ժամանակի մեքենան» մեզ անցյալ տանելու փոխարեն տանում է ապագա, մոտ վաթսուն տարի հետո: Ես արդեն տասնյոթ տարեկան եմ ու հաշվարկել եմ, որ կհանդիպեմ իմ մահվան հրեշտակին, մոտ վաթսուն կամ յոթանասուն տարի հետո, իսկ «ժամանակի մեքենան» ուր որ է շուռ է գալու այս սարսափելի անդունդը՝ մեկ վայրկյանում հասնելով վաթսուն տարի հետո ինձ սպասող այդ հրեշ հրեշտակին: Ես հազիվ եմ պահում ինձ, որ ամեն աջ ու ձախ շպրտվելուց դուրս չթռչեմ:

Վերջապես «ժամանակի մեքենան» հասնում ու կանգ է առնում գյուղի մեջտեղում: Ինչ-որ սուր, տհաճ հոտից քիչ է մնում ուշագնաց լինեմ: Ամեն տեսակ փորձությունների պատրաստ եմ դիմանալու, բայց ոչ այս զզվելի բուրմունքներին: Ասում են՝ թրիքի հոտն է, կսովորես ու էլ չես զգա: Բոլորս էլ հոգնած, ջարդված ցատկում ենք գետնին՝ ուղիղ մի քանի սանտիմետր հաստությամբ ցեխի մեջ: Նայում եմ շուրջս: Ցեխն ամենուր է, և մենք համեմատաբար ավելի լավ

տեղում ենք:

- Գիշերն անձրև է եկել,- մեղավոր ձայնով ասում է Կարենը, կարծես այս վատ եղանակի միակ պատասխանատուն ինքն է, քանի որ ինքն է բոլորին հրավիրել:

- Գոնե զգուշացնեիք, որ նոր կոշիկներս չհագնեի,- բողոքում եմ ես:

Ինչ-որ մեկը ձայն է տալիս ինձ.

- Մառա՛, ընկերուհիդ թափահարումներին չդիմացավ և ուր որ է հետ է տալու չմարսված կերակուրը, հասի՛ր օգնության:

Ես ոտքերս մի կերպ ցեխերից պոկելով արագ մոտենում եմ Գայային, որը կռանում և նորից անարդյունք ուղղվում է՝ փորձելով հնարավորինս արագ ազատվել այս առավոտյան տատիկիս պատրաստած ձվածեղից: Մտածում եմ՝ հետո ինչ, որ գյուղում ենք ու գետինը ցեխոտ է, ճիշտ չի լինի ավելի կեղտոտել այն, պետք է շտապ ինչ-որ տոպրակ տալ Գայային: Բացում եմ պայուսակս, որ տոպրակ հանեմ: Գայան էլ փնտրող հայացքով նայում է պայուսակիս մեջ՝ հույս ունենալով ինձանից ավելի շուտ գտնել այդ բաղձալի տոպրակը: Այդ պահին ինչ-որ տարօրինակ

բրիկոցով, հրաբխի նման, Գայայի ստամոքսի ամբողջ պարունակությունը դուրս է ժայթքում ուղիղ պայուսակիս մեջ:

- Ահա և քեզ տոպրակ,- ծիծաղելով ասում է Հրանտը,- ասում էի չէ՞, ա՛յ Գայա ջան, այդ կարտոֆիլները չուտես:

- Լավ, բավական է իրար միս ուտեք, գնանք տուն տատիկիս պատրաստած ընթրիքը վայելենք, մերոնք համարյա գյուղի կենտրոնում են ապրում:

Հենց այդտեղ, ցեխերի մեջ թողնելով «ժամանակի մեքենան», ոլորապտույտ նեղ աստիճանների նմանվող արահետով բարձրանում ենք ու կանգնում կարմիր կտուրով ու նախկինում ըստ երևույթին կարմիր գույն ունեցած Կարենենց դռան առաջ: Հետ եմ նայում: «ժամանակի մեքենան» արդեն անհետացել է գյուղից, ով գիտի թե ինչ ճակատագրեր է հիմա տեղափոխում և որտեղից՝ որտեղ: Ասենք դա այնքան էլ էական չէ, կարևոր է միայն միշտ ճիշտ տեղավորվել ժամանակի մեջ:

ՄԱՍ 2

ՏԱԽՏԱԿԵ ՏՆԱԿԸ

ՏԱԽՏԱԿԵ ՏՆԱԿԸ

Կարենենց տանն ենք: Կարենը մեր կուրսի ամենահյուրասեր տղան է: Տեսնելով նրա տատիկի հյուրասեր պահվածքն արդեն հասկանում եմ, թե որտեղից է դա գալիս:

Կարենի տատիկը նիհար, փոքրամարմին, աշխույժ աչքերով, արագաշարժ կին է: Նրանից կարծես հայրենի հողի բուրմունքն եմ զգում, իսկ մարմնիս ամեն մի բջիջն իր հազարամյա կարոտն է ըմբոշխնում նրանից, և ինչ-որ հարազատ, շատ հարազատ կապ զգալով չեմ կարողանում հայացքս կտրել նրանից:

Մինչ տատը երջանկացած իր թոռան ու նրա ընկերների ժամանումով ուրախ-ուրախ սեղանին է շարում այն ամենն, ինչ պահել է նկուղում հենց այս օրվա համար, ես մոտենում եմ նրան ու մի փոքր ամաչելով հարցնում պետքարանի տեղը: Նա ձեռքով ցույց է տալիս բակի ծայրում գտնվող, մարդու հասակի բարձրության, փայտե արկղի նմանվող մի տախտակե տնակ, որի դուռը քամուց ճռռալով այս ու այն կողմ է ճոճվում: Արագ շարժվում եմ մուտքի դռան կողմը՝ հետևիցս լսելով տատիկի ձայնը.

- Բալա՛ջան, այդ կտրտված թերթերից մեկը հետդ վերցրու, երեկվա լուրերի թերթն է:

Շատ եմ զարմանում՝: Ինչո՞ւ պետք է հիմա երեկվա լուրերի թերթը կարդամ, ես հեռուստացույցով ամեն ինչ դիտել եմ: Տատի խոսքը չանտեսելու և չվիրավորելու համար վերցնում եմ մի թերթիկ ու դուրս եմ գալիս:

Ա՛յ քեզ բան, արդեն տասնութ հոգի այդ փոքրիկ տնակի առաջ հերթ են կանգնել, ես ամենավերջինն եմ: Բոլորը լուրերի թերթից մի-մի կտոր ձեռքներին՝ հուզված ու խիստ բարկացած խոսում են քաղաքականությունից, բայց մտնելով այդ փոքրիկ տախտակե շինության մեջ, դուրս են գալիս քաղաքականության մասին մոռացած, անհոգ ու թեթև շտապում դեպի տուն վայելելու տատիկի թխած կարկանդակներն ու անարատ, հրաշք մածունից պատրաստված թանը:

- Երեխե՛ք, ես տանել չեմ կարող հերթերը, բոլորդ էլ դրա մասին գիտեք, թողեք առաջ անցնեմ,- խնդրագին տոնով դիմում եմ հերթի առջևում կանգնածներին:

Նրանք ընդառաջում են իմ անհերթ մտնելու ցանկությանը: Ճռռալով փակում եմ դուռն ու առաջին քայլն անելուց հետո ճոճվելով մի կերպ ինձ

պահում եմ՝ չընկնելու մի ինչ-որ սարսափելի մեծության փոսի մեջ, որից բացի ուրիշ ոչինչ չկա ներսում: Մի փոքր անուշադիր լինեի՝ կխրվեի այդ անտանելի, գարշահոտ ճահիճն ու կխեղդվեի: Բավական չէ մեռնելու էի, վերջին ակնթարթներս էլ անցկացնելու էի այդ գարշանքի ու զզվանքի զգացողություններով: Վտանգը դեռ անցած չէ՝ մի սխալ շարժում և կհայտնվեմ արտաքնոցի այդ դժոխքում, որից հետո աստված հաստատ կփակի դրախտի դռներն իմ առջև, որովհետև կյանքիս վերջին վայրկյաններին բոլորին ներելու և աստծո կողքին լինելու փոխարեն՝ ես կավելացնեմ մեղքերս նոր շռայլ անեծքներ նետելով այդ տախտակյա շինության ինժեների հասցեին: Ես հասկացա՝ ահա թե ինչու են մարդիկ ուրախ ու անհոգ դուրս գալիս այստեղից: Նրանք երջանիկ են, որ ողջ են մնացել:

- Գայա՛, Գայա՛,-ահաբեկված ձայն եմ տալիս ներսից,- եթե երկու րոպեից դուրս չգամ, կոտրեք դուռը և եկեք ինձ փրկելու:

Հերթում կանգնածների քրքջոցը պայթում է օդում:

- Ծիծաղե՛ք, ծիծաղե՛ք, շուտով ձեր հերթն էլ կգա ու ամեն ինչ կհասկանաք:

Պետք է ինչքան հնարավոր է շուտ դուրս գալ

այստեղից: Փափուկ թղթի կտոր փնտրող հայացքս ոչինչ չգտնելով՝ կանգ է առնում ձեռքիս լուրերի վրա ու այդ պահին անմիջապես հասկանում եմ այդ խնամքով կտրված թերթիկի օգտագործման իրական նշանակությունը: Ուշադիր նայում եմ վրան և ի՞նչ՝ վարչապետի ձեռքն օդում թափահարելու պահին նկարված լուսանկար է՝ ականջի ծայրից մկրատով կտրված ու արդեն մի փոքր ճմրթված: Շուռ եմ տալիս հակառակ կողմը, այստեղ էլ վարչապետը կնոջ ուղեկցությամբ քայլում է իր կողմնակիցների հետ: Ընտրություն չունեմ, թերթն այստեղ իր նպատակին պետք է ծառայի: Այս գյուղացիները շատ հետաքրքիր մարդիկ են: Ընտրություններին գնում, ձայն են տալիս, իսկ հետո նկարներն օգտագործում պետքարաններում: Ասա, ա՛յ ժողովուրդ, «թե ընտրում եք պետքականը, մի տարեք այն պետքարանը»: Չէ, բառախաղս կարծես չստացվեց, արագ դուրս եմ գալիս այս տախտակե տնակից և երջանիկ տեսք ընդունած՝ բոլորի պես, պարտեզի միջի նեղ արահետով քայլում տան ուղղությամբ:

ՄԱՍ 3

ԳՈՄՈՒՄ

ԳՈՄՈՒՄ

Հրաշալի է՝ ես պարտեզում եմ: Ինչո՞ւ շուտ տուն մտնել: Որոշում եմ վայելել այս հրաշք այգու գեղեցկությունը: Խնձորենին տնքում է իր առատ բերքից: Նայում եմ դեղնակարմիր խնձորներին: Ա՛յ, այս մեկը կարծես ինձ աչքով է անում և այնպես է աղերսում քաղել իրեն ու ուտել, որ հազիվ եմ դիմանում: «Չէ»,- մտքում շատ դժվարությամբ մերժում եմ նրան,-«իմ բարեկրթությունը թույլ չի տալիս ինձ քաղել քեզ»: Շարունակում եմ զբոսնել այգում հիանալով խաղողի թփերով զարդարված ցանկապատով:

Օդը գյուղում ավելի սառն է, քան մեզ մոտ քաղաքում: Դա հատկապես նկատելի է երեկոյան այս ժամերին: Պետք է արագ մտնել տուն՝ ինչպես բոլորը:

Պարզվում է բավականին դժվար է և ձանձրալի լինել «ինչպես բոլորը»: Դա հասկանալով ոտքերս ինձ տանում են գոմ մտած կենդանիներին դիտելու: Կարենի տատը սեղանը պատրաստելուց հետո արդեն կովերին է կթում: Նրա վարժ մատների միջով սպիտակ հեղուկը փրփրալեն լցվում է դույլի մեջ: Թվում է, թե մնացած բոլոր կովերն

անհամբերությամբ սպասում են իրենց հերթին:

- Տա՛տ ջան, կարո՞ղ եմ ես էլ փորձել:

- Ես քո քաղաքացի ջանին ղուրբան, դու չես կարող ու քեզ պետք էլ չի, որ սովորես:

- Պետք չէ այդպես ասել, տա՛տ: Մեկ էլ տեսար՝ ամուսնացա Ձեր սիրելի թոռնիկի հետ ու տեղափոխվեցի գյուղ,- կատակում եմ ես ու նայելով նրա զարմացած աչքերին հազիվ եմ պահում ծիծաղս:

Միևնույնն է, տատը չի վստահում այդ հետաքրքիր ու կարևոր գործն ինձ, իսկ ես հաստատ որոշում եմ՝ առավոտյան, երբ բոլորը քնած լինեն, գաղտնի մտնել գոմ ու սովորել կթել: Ի՞նչ դժվար բան կա՝ մեկ աջ ձեռքդ ես քաշում ներքև մեկ՝ ձախ: Պատկերացնում եմ, ինչպես կզարմացնեմ բոլորին ցույց տալով իմ մեկ օրում ձեռք բերած վարպետությունը: Իսկ հիմա պետք է գնալ փորձարկելու տատիկի թխած թարմ ու համեղ կարկանդակները:

Երբ մոտենում եմ սեղանին, արդեն շատ ուշ է, բոլորը գնացել են քնելու՝ իրենց ստամոքսներում տեղավորելով ամեն ինչ, նույնիսկ՝ ինձ հասանելիք կարկանդակները: Հոգ չէ, գյուղի անարատ, համեղ

մածունն ու թարմ լավաշն ըմբոշխնելուց հետո, արագ շարժվում եմ արդեն ինձ հատկացված անկողնու ուղղությամբ: Այնքան հոգնած եմ, որ վայրկյան առաջ հասնելու համար, վերջին քայլի փոխարեն ցատկում եմ մահճակալին ու արդեն օդի մեջ խռմփալով ընկնում աշխարհի ամենափափուկ ու ամենամաքուր դրախտային անկողնու մեջ:

Բարի գիշեր աշխարհ, քեզ բարի ու խաղաղ արթնացում:

ՄԱՍ 4

ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

ԱՌԱՎՈՏԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Իմ առաջին գիշերն է գյուղում:

Արթնանում եմ աքաղաղի կանչից,մի կերպ բացում աչքերս՝ դեռ մութ է:

- Այս փչացած զարթուցիչն ինչ է ուզում ինձանից, չի թողնում քնել,- աչքերը բացելով քթի տակ մրթմրթում է կողքիս մահճակալին պառկած համակուրսեցիս՝ Գայան:

- Որ մենք արձակուրդի մեջ ենք ու պետք չի մեզ արթնացնել, այդ հիմար թռչունը կարող է և չիմանալ,- շարունակում է Գայան,- բայց որ դեռ լույսը չի բացվել, ինչ իրավունքով է խանգարում մարդկանց: Չէ որ ասում են՝ աքաղաղները լուսաբացին են «ծուղրուղու» կանչում, իսկ հիմա դեռ մութ է ամենուր:

- Բայց, Գա՛յ ջան, այդ թռչունները ոչ «ծ» տառն են կարողանում ասել, ոչ էլ «ղ», ուր մնաց թե «ծուղրուղու» կանչեն, համենայն դեպս, ես այդպիսի ձայն չլսեցի,- փորձում եմ խոսեցնել Գայային, որ նորից չքնի և ես ինձ մենակ չզգամ սենյակում:

Նա նստելով մահճակալին քունը գլխին մրթմրթում է.

- Մենք էլ մեր մեսրոպատառ հայերենում չունենք այն տառերն ու հնչյունները, որ կարողանանք մի փոքր մոտիկ արտաբերել իրենց զիլ կանչը: Պատկերացնո՞ւմ ես, եթե ունենայինք, հնարավոր է և հասկանայինք իրենց կամ մյուս կենդանիների լեզուները:

- Վա՛յ, այս ինչ է,- զարմանում եմ ես,- դեռ մի քանի րոպե էլ չի անցել, իսկ երկինքն արդեն կարծես սկսում է լուսավորվել:

Բարի լույս, Հայո՛ց աշխարհ:

ՄԱՍ 5

ԿՈՎԸ

ԿՈՎԸ

Ես միշտ ցանկացել եմ լինել որևէ գյուղի որևէ գոմում մենակ, սկսած այն պահից, երբ տատիկս կարդում էր «Մանկական կտակարանը», որտեղ ասված էր, որ Քրիստոսը ծնվեց գոմում: Ինձ թվում է, եթե մենակ լինեմ ու աղոթեմ այստեղ, որտեղ Քրիստոսն է ծնվել, աստված անպայման ինձ ուժ կտա հաղթելու չարի ու բարու, հոգու և մարմնի, լույսի ու խավարի պայքարում:

Ահա և ես գոմում եմ, կկթեմ կովին ու հետո կաղոթեմ: Ո՞ր մեկին մոտենալ: Մտքում ընտրում եմ ամենագեղեցիկ կովին: Բոլորն էլ շատ խելացի ու մի տեսակ տխուր աչքեր ունեն:

Ես նկատում եմ, որ նրանց ստինքները տարբեր մեծության են: Հարկավոր է ընտրել ամենափոքր չափսը, որ բռնելու համար հեշտ լինի: Ինչ կա որ, կանանց մոտ էլ է այդպես պատահում, չէ՞ որ դրանից կաթի համը բնավ էլ չի փոխվում:

Վա՛յ, կենդանին կարծես օտարություն զգալով չար հայացքով բարկացած ինձ է նայում: Երբ բռնում եմ կաթնագեղձը, որ ներքև քաշեմ, այդ անպատկառ արարածը կողք է ցատկում ու

կոտոշներով հարձակվում ինձ վրա: Բակում «գորդզագորդ» խաղի հմտությունն ինձ օգնում է խույս տալ առաջին հարվածից: Դա մի խաղ է, որտեղ երկու կողմից գնդակով փորձում են հարվածել քեզ, իսկ դու խույս ես տալիս: Երկրորդ հարվածին հերթը չի հասնում՝ նետվում եմ բաց դռնից դուրս և ինչքան ուժ ունեմ վազում եմ դեպի տուն՝ հետևիցս լսելով այդ սրիկայի փնչոցն ու կճղակների դոփյունը: Դուռը թափով փակելուց հետո էլ դեռ ինձ թվում է, թե հիմա սարսափ կինոնկարների նման՝ ուր որ է դուռը կբացվի, և այդ կովը կհարձակվի վրաս և իրոք... Դուռը ճռռում է, աստվա՛ծ իմ, բացվում է... Ճաշասենյակ է մտնում... Վախից փակում եմ աչքերս:

Կարենի տատն է:

- Վա՛յ, էդ անասունն ինչի՞ էր ընկել հետևիցդ, հո շատ չե՞ս վախեցել: Ա՛ռ, ջուր խմի՛ր,- ինձ է մեկնում կողքի սեղանին դրված ջրի փոքրիկ սափորն ու մի ծռմռված մետաղյա բաժակ:

- Տա՛տ ջան, ուզում էի կթել սովորել ու բոլորիդ զարմացնել, իսկ այդ վայրենին թույլ չտվեց:

Տատը ծիծաղից կչկչալով ընկնում է ուղիղ բացմոցի վրա, փորձում է վեր կենալ, ինչ-որ բան ասել, բայց մի քանի տառից ավելի չի կարողանում

արտաբերել: Նա անարդյունք փորձեր է անում կանգնեցնել բարձր ժայռից գլորվող ձնահյուսի պես ավելի ու ավելի ուժգնացող իր ծիծաղը և օդում անկանոն թափահարելով ձեռքերը նորից ընկնում է փափուկ բազմոցին: Բոլոր քնածները, որոնց աքաղաղի կանչն այդպես էլ չէր կարողացել արթնացնել, այս ծիծաղող զարթուցիչի դեմ անզոր գտնվելով՝ վազում են ճաշասենյակ: Ծիծաղն այնքան վարակիչ է, որ Հրանտը՝ չիմանալով ծիծաղի բուն պատճառը, քրքջում է այնքան, որ քիչ է մնում ընկնի տատի կողքին:

- Ի՞նչ է կատարվում այստեղ,- աչքերը տրորելով սենյակ է մտնում Կարենը:

Տատիկը մի կերպ հասկացնում է, որ սրտի դեղն է ուզում:

- Լսի՛ր,- զգուշությամբ հարցնում եմ կողքիս կանգնած Գայային, որն ամեն վայրկյան ծիծաղի վերածվելու պատրաստ ժպտացող աչքերով նայում է տատիկին,- ասում են՝ ծիծաղը երկարացնում է կյանքը, իսկ ինչո՞ւ է այս ծիծաղը փորձում կարճացնել տատիկի կյանքը և նա ստիպված է դեղ կուլ տալ:

Մինչ Գայան ինչ-որ բան կասեր, տատիկը ծիծաղից արցունքակալված աչքերը հառում է վրաս ու մի

կերպ արտաբերում.

- Ախր ո՞վ է տեսել, որ ցուլին կթեն:

- Ո՞նց, դա ցուլ է՞ր, դուք չէիք ասել, որ ցուլ էլ ունեք,- մրմնջում եմ ես:

Ծիծաղի ռումբը պայթում է սենյակում: Հրանտը փորձում է ձեռքերով փռթկոցը պահելով մի կերպ դուրս նետվել սենյակից, որ տատիկին նորից չվարակի ծիծաղով, մյուսները հետևում են նրա օրինակին ու ես լսելով դրսում իրենց հռհռոցը հասկանում եմ, որ շատ եմ սիրում նրանց: Մի օր կարոտելու եմ, շատ եմ կարոտելու այս օրերը և փորձում եմ հիշողությանս մեջ ամրագրել նրանց ձայները, տատիկին ու իմ այս առաջին օրը գյուղում:



ՄԱՍ 6

Գետափին

ԳԵՏԱՓԻՆ

Առավոտյան գյուղում եռուզեռ է: Ամեն կողմից լսվում են իրենց ոչխարներին գոմից հանող հարևանների աղմուկն ու տնից տուն ողջույնները միմյանց, շներն ինձ անհասկանալի պատճառով հաչում են: Տատիկը նախաճաշ է պատրաստում:

-Տա՛տ ջան, կարո՞ղ եմ ինչ-որ բան էլ ես անել,- իր օգնությունն է առաջարկում Գայան:

-Չէ, տա՛տ, նրան չթողնես խոհանոց՝ մեզ ուտելու ոչինչ չի մնա,- վրա է տալիս Հրանտը:

Ես նկատում եմ, որ Հրանտը հատուկ Գայայի կողքից չի հեռանում, երևի չի ուզում բաց թողնել նրա ամեն խոսքին ինչ-որ բան ավելացնելու հնարավորությունը:

Նախաճաշն ավարտելուց հետո բոլորն արդեն հեռացել են սեղանի մոտից, բացի Գայայից ու Հրանտից: Հրանտը տեսնելով Գայայի առողջ ախորժակը, իրեն հասանելիք գաթաները նույնպես տվել է նրան ու զարմացած հետևում է, թե ինչ արագությամբ են տատի այդ համեղ թխվածքները տեղափոխվում նրա գեղեցիկ ու սպիտակ ատամնաշարից դեպի ստամոքս:

- Ո՞վ է ուզում զբոսնել գետի ափին կամ լողալ,- ձայնում է Կարենը բակի կողմից,- նախաճաշը վերջացնեք՝ միացեք ինձ, ես ցածում ձեզ եմ սպասում:

Անին, որը վաղուց է համակրում Կարենին, մեղմ ժպտալով արագ մոտենում է իր ճամպրուկին լողազգեստը վերցնելու համար:

Նա շատ բարետես կազմվածք ունի: Կարելի է ասել, որ նա խմբի ամենագեղեցիկ աղջնակն է՝ երկար, գանգրահեր մազերը ծածկում են ուսերը, իսկ հաստ թարթիչները փորձում են թաքցնել նրա թափանցիկ, կարծես ոչ մեկին չնկատող հայացքը:

Նրա կողքին քաղաքի փողոցով քայլելիս ես միշտ անհարմար եմ զգում: Տրանսպորտի մեջ երևացող գլուխները մեկը մյուսի հետևից ընկնող «դոմինոյի էֆեկտի» նման հերթով շուռ են գալիս դեպի մեզ, տաքսիները քիչ է մնում թե բախվեն իրար՝ վարորդների անուշադիր, կողք նայող հայացքների պատճառով: Բոլորը մեզ են նայում, իսկ նա ոչինչ չնկատելով սահուն քայլվածքով, հպարտ անցնում է մայթերով, իրենից հետո շրջապատը ողողելով մաքրությամբ ու պարզությամբ, բարությամբ ու գեղեցիկը գնահատելու կարողությամբ: Նրա բաց վարդագույն շրջազգեստը հիմա էլ այնպես է գրկել մարմինը, կարծես արդեն հագել է իր լողազգեստը:

Ես միշտ կարծել եմ, որ գեղեցիկ աղջիկները երջանիկ են ու հաջողակ, բայց տեսնելով Կարենի անտարբերությունն իրեն անհույս սիրահարված այս գեղեցկուհու նկատմամբ, հասկանում եմ, որ սիրո դեպքում գեղեցկության օրենքները չեն գործում: Կարենին քաղաքի աղջիկները դուր չեն գալիս, իսկ Անիին քրոջ նման է վերաբերվում:

- Բայց գետում կարող ենք խեղդվել, ես լողալ չգիտեմ,- անհանգստանում է Գայան ու սկսում է խեղդվել՝ վերջին պատառը դեռ բերանում խոսելու պատճառով: Նրան արագ ջուր են տալիս:

- Դու վախենալու տեղ չունես,- վրա է տալիս Հրանտը,- գետը ոչ մի տեղ քո հսկա մարմնի խորությունը չունի:

- Ես լողազգեստ չունեմ,- արհամարհելով Հրանտի խոսքերը շարունակում է Գայան: Հրանտը նորից չի դիմանում.

- Գա՛յ ջան, ո՞նց կարող ես ունենալ, եթե սպորտային խանութների վաճառողուհիները քո չափսերին համապատասխան լողազգեստ երբեք չեն էլ տեսել: Երևի երեք հատ պիտի առնես ու ինչ-որ կերպ կարես իրար հետ:

Այդ ընթացքում Անին շատ խնամքով տեղավորում

է լողազգեստն իր ձեռքի պայուսակի մեջ ու նորից ժպտում.

- Ես պատրաստ եմ:

Անհոգ թիթեռնիկների պես ծաղկից ծաղիկ թռչկոտելով իջնում ենք ցած: Արևը մերթ ժպտում է մեզ, մերթ էլ զայրացած փակում դեմքը գորշ թափանցիկ ամպերով, կարծես ուզում է միանալ մեզ ու «պահմտոցի» խաղալ մեր հոգիների հետ: Մենք իրարից թաքնվելու տեղ չունենք: Մեր պարզ ու անմիջական հոգիները դարավոր անցյալից եկող հարյուր հազարավոր թելերով կապված են իրար ու մեր հայրենի հողին:

-Էրեխե՛ք, մի քիչ դանդաղ քայլե՛ք,- ձայնում է Գայան:

Հետ եմ նայում ու ապշում՝ Հրանտը, որ միշտ փորձում էր ինչ-որ կերպ նեղացնել Գայային, բռնել է նրա ձեռքը և օգնում է անվտանգ ցատկոտել առուն անցնելու նպատակով ջրի մեջ տեղադրված սուր-սուր քարերի վրայով: Եթե նրանց չճանաչեի, անշուշտ, կմտածեի սիրահարված զույգ է գալիս մեր հետևից, քանի որ բացի իրենցից ուրիշ ոչինչ չեն նկատում և այնպես քնքշությամբ են նայում միմյանց:

Ահա և գետակը, որ տեղ-տեղ առվի է նմանվում Հրանտը ճիշտ է՝ ոչ ոք չի կարող այստեղ խեղդվել:

Ափի մոտ թփերն ու ծաղիկներն օրորվում են մեղմ քամուց: Անին միակն է, որ թփի հետևում հագնելով լողազգեստը մտնում է գետը, նույնիսկ տղաները ջուրը սառը համարելով խուսափում են լողալ: Մի փոքր այն կողմ գյուղի մի քանի աղջիկներ նույնպես լողում են գետում: Մեզ տեսնելով նրանք արագ դուրս են գալիս ջրից: Զարմանքով նկատում եմ, որ նրանք հենց առօրյա զգեստներով էլ մտել են ջուրը: Թաց շրջազգեստներն այնպես են կպել ու ընդգծել ամուր, առողջ ու ձիգ մարմինները, որ Արամը չի դիմանում և Կարենին դիմելով մրմնջում է.

- Աստվա՛ծ իմ, նրանք ավելի մերկ են, քան որևէ լողազգեստով աղջիկ, որ երբևէ տեսել եմ:

Անին նկատելով, որ Կարենի հետաքրքրված հայացքն ուղղված է այդ համագյուղացի աղջիկներին, առաջարկում է.

- Եկեք բարձրանանք դիմացի սարը:

- Էդ քո ասած դիմացի սարը հասնելու համար երկու օր պիտի քայլենք, որ հասնենք սարի փեշին միայն:

- Ինչպե՞ս թե,- հակադրվում եմ Կարենին,- թվում

է, թե ձեռքս մեկնեմ կհասնի, իմ աչքաչափով տասնհինգ րոպեից կհասնենք սարի ստորոտին:

- Ավելի լավ է բարձրանանք այս բարձր բլուրը երեկոյան կհասցնենք վերադառնալ տուն:

Կարենի այս առաջարկին համաձայնվում ենք բոլորս: Մի քանի րոպե չանցած՝ համաձայն մեր ազգային կործանարար պառակտման գործոնի, մեր միասնությունը փլուզվում է: Համաձայնության չենք գալիս, թե որ կողմից է հարմար բարձրանալ գագաթը: Բաժանվել ենք երեք խմբի և ոչ ոք չի ուզում զիջել կամ լսել մյուսի կարծիքը: Ես, Գայան, Անին, Հրանտն ու Կարենը հայտնվում ենք մեր առանձին ենթախմբում և վստահելով Կարենի տեղանքի իմացությանը շարժվում ենք առաջ՝ հետևում թողնելով առվի պես քչքչացող գետակն ու գյուղի աղջիկների զրնգուն ծիծաղը:

Այդ ծիծաղը զեփյուռի թեթև թևերով թռչում է զանգակածաղիկների մեջ, դրանք էլ քրքջալով նետում են ծառերին ու խոտերին, քամին էլ ուժգնանալով վերջին պատառիկները հասցնում է արևին ու արևը ծիծաղում է: Օ՜ զարմանք, արևի ճառագայթների մեջ դա արդեն այն զրնգուն ծիծաղը չէ, այլ անմեղ փոքրիկ երեխայի գլգլոց, դրանք այդ նույն աղջիկների մանկության

հուշերում մնացած հրճվանքի ճիչերն են ու նաև ապագայի վստահությունը:

Ծիծաղի՛ր, արև, ես քո ծիծաղի կարիքը շատ ունեմ:

ՄԱՍ 7

ԱՆՃԱՆՈԹ ԲՈՒՐՄՈՒՆՔ

Համակուրսեցիներիս հետ երգելով բարձրանում ենք ամենամոտ բլուրը, որն իմ կարծիքով սարից չի տարբերվում:

Վերջապես իմ երազանքը՝ բարձրանալ սարեր կամ բլուրներ, իրականանում է: Քայլելիս մաշկիս վրա զգում եմ զեփյուռի մեղմ շոյանքն ու դրա հետ եկող օդի անուշ թարմությունը և այնպես հպարտ եմ նայում սարերին կարծես հենց նոր ե՛ս եմ նրանց նկարել հեռվում:

Դիմացի բլուրը ծածկված է մշուշի փափուկ վարագույրով, որը երազող գեղեցկուհու տեսք է տալիս նրան, իսկ հեռվում ժայռոտ լեռների գագաթները կարծես սավառնում են դեպի ջինջ կապույտ երկինք: Նրանց նայելիս մի տեսակ ակնածանք եմ զգում ու շունչս կտրվում է: Վայրի ծաղիկների և բազմատեսակ խոտերի բույրից արբած՝ տեղ-տեղ քարքարոտ, նեղ ճանապարհով բարձրանում եմ վեր: Ամեն մի քար կարծես փորձում է խոսել ինձ հետ շատ կարևոր անցյալի մասին, բայց չի հասցնում, որովհետև խմբից հետ չընկնելու համար շարունակում եմ առաջ գնալ՝ թողնելով նրանց անցյալի ծանրության մեջ:

Բնության ձայները՝ թռչունների աշխույժ ծլվլոցը, միջատների բզզոցն ու խոտերի խշշոցը, ինչ-որ ծանոթ մեղեդու նմանվելով շոյում են ականջներս: Երբեմն-երբեմն մեղուների կամ այլ միջատների փոքրիկ մի խումբ դզզալով անցնում է ականջիս տակով՝ խանգարելով և ընդհատելով ձայնային ներդաշնակությունը:

- Վա՛յ, այս ինչ տհաճ հոտ է,- բղավում եմ ես մեր կողքով հերթական միջատների պարսի սլանալուց հետո:

- Ոչ մի հոտ էլ չկա այստեղ,- ասում է առջևից գնացող Կարենը:

- Չէ, իրո՛ք, ճիշտ է ասում Մառան,- լսվում է կողքիցս Գայայի քիթը բռնած շնչակտուր ձայնը,- շատ զզվելի հոտ է:

Ես որոշում եմ առաջ վազել ու հասնել Կարենին, քանի որ ինչպես ինքն է ասում, ոչ մի վատ բուրմունք չկա իր շուրջը և քիչ է մնում ավելի ուժգնացող զզվելի հոտից ուշաթափվեմ:

- Ֆու՛,- գոռում է Կարենը,- ես էլ զգացի, երբեք այսպիսի գարշահոտ չեմ զգացել:

- Վա՛յ, ինչ լավ է, մեզ մոտ անցավ արդեն ու միայն

հաճելի ծաղիկների բուրմունքն ենք շնչում,- լսվում է Գայայի ձայնը:

Նորից հետ եմ վազում դեպի Գայան՝ ազատվելու այդ զզվելի հոտից: Կարենի ասելով իր շուրջն էլ է օդը կամաց-կամաց մաքրվում: Ես այնքան դժբախտ եմ զգում ինձ, ուզում եմ ձեռքով փակել քիթս մտնող օդի ճանապարհն ու այդ պահին չգիտես ինչու քառակի անգամ ուժգնանում է այդ մահացու բուրմունքը: Ես կյանքում առաջին անգամ ծանոթանում եմ ինձ համար միշտ անհասկանալի նախանձի զգացողությանը: Նախանձում եմ աշխարհի բոլոր այն մարդկանց, ովքեր ծնվել են առանց հոտառության, կամ կորցրել են այն իրենց կյանքի ընթացքում:

- Մառա՛,- զարմացած բացականչում է Գայան,- հոտը կարծես քեզ հետ տեղափոխվում է:

Անին նայելով դեմքիս սկսում է բարձր ծիծաղել և պայուսակից իր փոքրիկ հայելին հանելով մեկնում է ինձ:

- Նայի՛ր:

Հայելու միջից ինձ է նայում իմ նմանակը, միայն թե նրա քթի տակ դեղին բեղեր կան, որ ըստ երևույթին գոյացել են ինչ-որ թռչունի կամ գուցե և

միջատի մարմնից արտանետված փափուկ զանգվածից:

- Վա՛յ, փաստորեն այդ գարշահոտության աղբյուրը հենց քթիս տակ է,- զզվանքով արտաբերում եմ ես և բոլորի ուրախ քրքջոցների տակ փորձում եմ մի կերպ ձերբազատվել այդ չարաբաստիկ նյութից՝ օգտվելով բնության պարգևած տերևներից, խոտերից ու ծաղիկներից:

Հասնում ենք գագաթին այն պահին, երբ արևն արդեն սկսում է մայր մտնել, տաքացած բլուրների վարդագույն փայլն սկսում է հետզհետե խամրել: Ամպամած երկինքը վերածվում է կարմիր, կապույտ, ծիրանագույն ներդաշնակության:

Մեր երեք խմբերը վերջապես միավորվում են այդ երկնային եռագույն դրոշի ներքո և թռչկոտելով ու քրքջալով սլանում ենք ցած՝ ամեն վայրկյան մեր ոտնահետքերն ավելացնելով քարերի հիշողության մեջ:

ՄԱՍ 8

ԿԱՐՄԻՐ ՇՐՋԱԶԳԵՍՏԸ

ԿԱՐՄԻՐ ԾՐՁԱՁԳԵՍՏԸ

Սարի ստորոտին եմ ու իմ համակուրսեցիների հետ: Ի՜նչ երջանկություն: Երկու օր առաջ քաղաքում տանը նստած հեռուստացույց էի նայում, իսկ հիմա գյուղում եմ ու հենց նոր իջա սարից: Ի՜նչ հետաքրքիր անակնկալներով է լի կյանքը:

Ուրախ կատակներով դեպի գյուղ ենք շարժվում: Արամը բարձրաձայն երգում է հայրենասիրական երգեր: Նա լավ ձայն ունի:

Թախծոտ երեկոն վաղուց արդեն սպասում է իր սիրուհուն՝ գիշերվա խավարին, իսկ մայրամուտը խաղաղության ու անդորրի թմբիրը տարածելով օդում փորձում է թաքցնել այդ կապը մարդկանցից:

Գյուղ հասնելուն պես մեր ճամփան փակում է արոտավայրից դեպի տուն գնացող կովերի ու ոչխարների հսկայական հոտը: Ստիպված ենք արանքներով առաջ անցնել: Փորձում եմ կճղակավորների աչքերին նայելով մի կերպ ճանաչել Կարենենց կովերին: Հետևիցս եկող դոփյուններն ինձ հիշեցնում են առավոտվա բարկացած ցուլին: Սարսափած հետ եմ

նայում: Փառք աստծո, որ ցուլ չէ, կով է, բայց ինչո՞ւ է հետապնդում ինձ:

- Էրեխե՛ք, սա կարո՞ղ է կարմիր շորիս պատճառով է ընկել իմ հետևից: Ախր ինչո՞ւ հագա այս կարմիր շորը:

- Մառա՛, չէ՞ որ արդեն լավ տարբերում ես կովը ցուլից, այդ ցուլերն են կարմիրի վրա հարձակվում, իսկ սա կով է,- փորձում է ինձ հանգստացնել Կարենը:

«Խե՛ղճ, միամիտ Կարեն»,- մտածում եմ,-«ապրում է գյուղում և դեռ տեղյակ էլ չէ, թե ինչ է կատարվում աշխարհում: Մարդիկ փոխում են իրենց սեռը, արտաքինով կարող է աղջիկ լինել, բայց իրեն միշտ տղա զգալ կամ՝ հակառակը: Այսինքն, եթե դա մարդկանց մոտ պատահում է, ինչո՞ւ չի կարող կենդանիների հետ էլ պատահել: Այո՛,այո՛, սա հենց այդ դեպքերից է: Սա կով է, բայց իրեն ցուլ զգալով կատաղած է իմ շորի կարմիր գույնից և շուտով ինձ բզիկ-բզիկ կանի»:

Անցնելով գյուղի քարքարոտ ու նեղ փողոցներով արագացնում եմ քայլերս: Պարզ լսում եմ նաև այդ պոտենցյալ մարդասպան անասունի արագացող քայլերի ձայնը: Սարսափով նայում եմ հետ: Հենց այդպիսի կարմիր, խոշոր և չար աչքերով էլ

պատկերացնում էի դրան: Տեղափոխվում եմ ճանապարհի ձախ կողմը՝ ավելի ու ավելի արագացնելով քայլերս, նա նույնպես անցնում է ձախ: Ընկերներս արդեն դադարել են ծիծաղել, զարմանքով ու կարծես անհանգստացած գոռում են.

- Մառա՛, արագացրու՛, արդեն հասնում է քեզ:

- Սա ի՞նչ է, խենթացա՞վ այս կովը,- լսում եմ Կարենի տագնապած ձայնը:

Ես ուղղակի ինչքան ուժ ունեմ շնչակտուր վազում եմ: Նայում եմ հետ՝ այդ գազազածն էլ է սկսում վազել՝ արագ կարճացնելով մեր միջև ընկած տարածությունը: Ահա, ուր որ է կհասնի իմ հետևից, հարկավոր է այս ամենամոտ ցանկապատից ներս մտնել: Ոչինչ, որ ուրիշի բակ է՝ պետք է փրկվել: Բախտի բերմամբ դուռը բաց է ու մի կերպ ինձ ներս եմ գցում այդ անծանոթ բակը: Ի՞նչ... «Կովացուլն» էլ բաց ցանկապատով արագ ներս է մտնում իմ հետևից: Վե՜րջ, փակում եմ աչքերս ու զգում եմ ինձ վագրի բերանում հայտնված եղնիկի պես: Մի՞թե սա է իմ վախճանը: Հիմա սուր կոտոշների հարվածները կլինեն իմ կյանքի վերջին պահերը: Հարվածները մի քանի ակնթարթ ուշանում են ու ես բացում եմ աչքերս:

Այդ սրիկան հանգիստ անցնում է իմ կողքով և ինքնավստահ քայլերով մտնում իր հարազատ գոմը:

- Ո՞նց,- մրմնջում եմ,- այդ անասունը վրաս նույնիսկ ուշադրություն չդարձրեց:

Մի պահ կարծես վիրավորվում եմ այդ կենդանու իմ գոյությունը չնկատող անտարբերությունից, իսկ իրականում ուրախանում, որ սարսափն արդեն ավարտվել է:

- Մա՛ռ ջան, ո՞նց ես,- առաջինը վազելով բակ է մտնում Կարենը:

- Կարե՛ն, ինչո՞ւ էր այդ կենդանին նույնպես արագացնում քայլերը:

- Դե, իրենք գիտեն իրենց գոմի տեղն ու մոտենալով բոլորն էլ ավելի ու ավելի արագ են շարժվում՝ տեսնելով իրենց ծանոթ դարպասները: Ով իմանա, գուցե հոգնած են և ուզում են վայրկյան առաջ ներս մտնել ու հանգստանալ: Ուղղակի, ես չգիտեի, Մա՛ռ ջան, սա ում կովն է, կներես, ինձ էլ մի պահ թվաց, թե հետևում է քեզ:

Այդ հոգնած կովերի նման մենք էլ հազիվ քարշ տալով մեր ոտքերը մոտենում ենք գյուղի կենտրոնին, որտեղ մեր «ժամանակի մեքենայի»

փոխարեն մի ավտոբուս է կանգնած:

- Ինչո՞ւ երեկ մենք այս հարմարավետ ավտոբուսով չմտանք գյուղ, Կարե՛ն,- զարմանքով հարցնում է Արամը:

- Շաբաթվա մեջ միայն մեկ օր է այս ավտոբուսը քաղաքից գալիս ու մեկնում հետ: Մի ժամից կշարժվի:

Նայում եմ շուրջս: Այստեղ միայն աշխատանքից վերադարձած տղամարդիկ են, կանայք ամենայն հավանականությամբ զբաղված են ամենօրյա անվերջանալի տնային գործերով: Վա՛յ, այս ինչ է: Բոլոր տղամարդիկ կարծես ինձ են նայում, բայց չէ՞ որ Անին հիմա ինձ հետ չէ:

-Կարե՛ն, այս մարդիկ կարծես ցուլերի նման կենտրոնացել են կարմիր շորիս վրա ու նրանց պես էլ չարացած են նայում վրաս, կոտոշ չունեն, բայց թվում է թե շուտով ինձ բզիկ-բզիկ կանեն:

-Մա՛ռ ջան, կարմիր գույնը կապ չունի: Նրանք զայրացած են քո կարճ շրջազգեստի պատճառով: Այստեղ ընդունված չէ կարճ շրջազգեստ հագնելը:

Ա՛յ քեզ բան, ստիպված եմ մտնել տուն և փոխել զգեստս:

ՄԱՍ 9

ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

Գյուղի կենտրոնում տղամարդիկ նստել են միակ խանութի պատի տակ ու զրույց են անում:

-Ասում են՝ գյուղում շուտով պիտի հարսանիք լինի, ուստա՛ Մուկուչ:

-Հա, գիտեմ, Վարդուհին առավոտ շուտ լուրը բերեց:

Նրանց լսելով ես հասկանում եմ, որ հեռախոսի հաղորդալարերն այստեղ հենց իրենք են՝ կենդանի մարդիկ: Սա կարծես կապի ավելի հուսալի միջոց է: Մարդիկ կարող են դիտմամբ կամ պատահմամբ հեռախոսը չվերցնել, իսկ այս դեպքում դա բացառված է, և ամեն մի լուր կայծակնային արագությամբ տարածվում է ողջ գյուղով մեկ:

Մինչ կհասնենք տուն հեռվից նկատում ենք, որ Կարենենց բակում և փողոցում մի հոծ բազմություն է հավաքված:

- Կարե՛ն, էս ինչ է, միտի՞նգ են անում,- հարցական հայացքով նրան է դիմում Անին:

- Չի բացառվում,- հնչում է Կարենի կարճ

պատասխանը և մինչ մենք դանդաղ ու հոգնատանջ շարժվում ենք այդ ուղղությամբ, նա արագ առաջ անցնելով անհետանում է ամբոխի մեջ:

Մոտենում ենք հավաքվածներին: Այնքան շատ են, կարծես ամբողջ գյուղն այստեղ է:

- Միտինգ եք անո՞ւմ, պապի՛ ջան,- առաջին իսկ պատահածին հարցնում է Հրանտը:

- Չէ, միտինգ չենք անում, մտի՛կ ենք անում, տղա ջան:

- Ի՞նչ եք մտիկ անում:

- Ինչ չէ, ում:

- Լավ, ո՞ւմ եք եկել մտիկ անելու:

- Կարենի հարսնացուին:

- Ո՞նց, մեր Կարենն արդեն հարսնացու ունի՞,- զարմացած բացականչում է Գայան:

Անին հեկեկալով վազում է հակառակ ուղղությամբ:

Ես ու Գայան անչափ հետաքրքրված փորձում ենք բազմությունը ճեղքելով առաջ գնալ: Հիմա արդեն լավ եմ հասկանում մայրիկիս պատմածները՝ հաց

գնելու համար գոյացած հերթերում շարժվելու անհնարինության մասին, երբ մեր նորաստեղծ երկիրը շրջափակման մեջ էր: Գայան օգնում է ինձ հետևից մի փոքր հրելով ու բարձրաձայն կանչելով.

- Ժողովո՛ւրդ, տեղ տվեք՝ անցնենք:

Վերջապես մտնում ենք բազմամարդ ճաշասենյակ, որտեղ համարյա ասեղ գցելու տեղ չկա: Տատիկը, իրոք, մի հաստ ոսկյա մատանի ձեռքին երգեցիկ տոնով ու հրճվանքով դիմում է մարդկանց.

- Հիմա, հիմա կտեսնեք իմ սիրուն, իմ չնաշխարհիկ հարսիկին:

- Մա՛ռ, տեսա՞ր ինչ ժամանակին եկանք,-փսփսում է ականջիս Գայան,- հիմա մենք էլ կտեսնենք հարսիկին:

- Եկա՛վ, եկա՛վ,- ուրախ բացականչում է տատիկը մատանին պարացնելով:

Մարդիկ էլ, չգիտես ինչու, իմ կողմն են շրջվում:

- Ո՞նց, ե՞ս եմ ձեր հարսիկը,- աչքերս արագ ճպճպացնում եմ, որ երազից արթնանամ: Չէ, երազ չէ, պարզվում է, ես եմ այդ հարսնացուն:

-Տատի՛ ջան, ինչ-որ բան շփոթել ես,- կմկմում եմ

ես՝ հուսահատ հայացքով Կարենին փնտրելով: Նա սենյակում չէ:

- Բալա՛ջան,- ասում է տատիկը խեղճացած ու հիասթափված,- բա երեկոյան չասեցի՞ր սովորեմ կով կթել, որովհետև ձեր հարսն եմ դառնալու:

- Կատակ էի անում, տատի՛:

Բոլորն ինձ են նայում: Հանկարծ, չգիտես ինչու, ես զգում եմ, որ կարոտել եմ, շատ եմ կարոտել մայրիկիս: Նա հիմա շատ հեռու է ինձանից, բայց ես ուզում եմ տեսնել նրա ժպիտը, փաղաքշական հայացքը, լսել նրա ձայնը, փաթաթվել նրան և ավելի պաշտպանված զգալ:

- Գայա՛, ե՞րբ է մեկնում ցածում կանգնած քաղաք տանող ավտոբուսը:

- Մա՛ռ ջան, կարծես քսան րոպեից:

Որոշումս կայացված է՝ ես մեկնում եմ:

ՄԱՍ 10

ՀՐԱԺԵՇՏ

ՀՐԱԺԵՇՏ

Ավտոբուսը դեռ անշարժ կանգնած է գյուղի կենտրոնում: Պետք է շտապել՝ ամեն րոպե կարող է շարժվել: Արագ հավաքում եմ ճամպրուկս, հրաժեշտ տալիս բոլորին ու վազում դուրս: Դարպասների մոտ Կարենը սրբելով Անիի արցունքները՝ փորձում է ինչ-որ կերպ նրան հանգստացնել: Չցանկանալով խանգարել նրանց՝ առանց որևէ բան ասելու նետվում եմ ավտոբուսի դռնից ներս: Մի քանի վայրկյան հետո չեմ դիմանում ու գլուխս հանելով գոռում եմ նրանց, ավելի ճիշտ Կարենին.

-Է՛յ, արքայա՛զն, վերցրո՛ւ տատի ձեռքից մատանին և առաջարկություն արա Անիին: Սրանից հարմար առիթ էլ չես ունենա:

-Է՛յ, դու՛, արքայադուստր Մառա՛,- լսվում է ի պատասխան,- գլուխդ և քթիկդ մի հանիր այդ ավտոբուսից դուրս, մի մոռացիր՝ այստեղ ցուլեր և «կովացուլեր» շատ կան:

Այդ պահին ավտոբուսը շարժվում է և ես լսում եմ քիչ առաջ արտասվող Անիի երջանիկ քրքիջը: Ով իմանա, գուցե ես այս բարերար հայոց հողում

հենց նոր տնկեցի հազարամյակներ ընթացող Կարեն-Անի ընտանեկան ծառի մի փոքրիկ շիվ: Ոչինչ անփոփոխ չէ այս աշխարհում՝ նույնիսկ Կարենի անտարբերությունն Անիի նկատմամբ: Կարծես թե սառույցը կոտրվում և հալվում է: Երևի սիրո և գեղեցկության օրենքներն ավելի մեծ հավանականությամբ են իրագործվում բնության մեջ, քան քաղաքում:

Մինչ ավտոբուսի տեսքով անցյալից ներկա տանող «ժամանակի մեքենան» քարքարոտ ու նեղ ճանապարհներով թափահարում է իմ հոգնած մարմինը, ես մտովի վերապրում եմ այն ամենը, ինչ պատահեց ինձ հետ այս մեկ օրվա ընթացքում ու որոշում եմ տեղ հասնելուն պես գիրք գրել և այն անվանել «Առաջին օրը գյուղում»:

Ամեն վայրկյան ես ավելի ու ավելի եմ հեռանում սարերից ու լեռներից, գետակից ու գյուղի պարզ ու բարի մարդկանցից, որոնցից քիչ առաջ բաժանվեցի ու կարծես, ինչ-որ կարոտ սկսում է ցավեցնել սիրտս:

Մնա՛ք բարով, իմ չքնաղ բնություն և ինձ արդեն հարազատ դարձած գյուղ: Ես հեռանում եմ, բայց հոգիս կարծես մնում է այստեղ: Ես գիտեմ, որ կվերադառնա՛մ մի օր, անպայմա՛ն կվերադառնամ:

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

«Առաջին օրը գյուղում» գրքի հեղինակ և ձևավորող՝ Ռուզան Վաչագանի Միրզոյանը ծնվել է Երևանում: Ավարտելով Երևանի Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի էներգետիկայի ֆակուլտետը՝ աշխատել է Երևանի Մերգելյանի անվան մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում որպես ինժեներ: Հենց այդ տարիներին էլ գրել է 2023թ լույս տեսած «Խառնաշփոթ գույներ» անդրանիկ գրքում զետեղված բանաստեղծությունների և հեքիաթ-պատմվածքների մեծ մասը:

Սկսած 1996թ-ից Ռուզան Միրզոյանը մշտական բնակություն է հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ ստանալով համակարգչային հմտություններ աշխատել է որպես ծրագրավորող՝ ԱՄՆ օդագնցության ու տիեզերական տարածության հետազոտությունների ազգային գործակալությունում, Ի7 ճարտարապետական ստուդիայում և տարբեր ինտերնետային կայքերում,: